

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ. — «Գեի» արևելեան վիպասանութիւնն: — Թարգմանութիւնն † Մ. Սաղաթեանցի: Հրատ. «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների Թիֆլիս, տպ. «Արօր», 1891 թ. 1):

Լերմոնտովի «Գե» արևելեան վիպասանութիւնը, որի առաջին նրմունքները լույս են տեսել 1829 թ. և շարունակ 9 տարի՝ մինչև 1838 թ. մշակել, ճշմարիտ բանաստեղծական մի գրած է: Այդ սոսկալի գեղարւեստական և հոգեբանական արժանատրութիւնը այնքան մեծ է, որ կրիտիկալի դեռ չլարժած ուստի աչքը չի կարողացել նշմարել նորա բոլոր փալ-գեղեցկութիւնը: Միայն օրերս Գր. Կոնդր «НОВАЯ ЛЮБОВЬ» — «Գե» ի հոգեբանական անալիզի մէջ ցոյց տուց ուստ ընթերցող հասարակութեան անդիտակցութիւնը գէպի Լերմոնտով և նրա գրածներն առ հասարակ Գր. Կոնդր ասում է, թէ այդ հասարակութիւնը չի հասկացել Լերմոնտովին, չի հասկացել նրա շարադրութիւնները, ինչու և չի կարո-

ղանում արժանապէս գնահատել, «մինչդեռ նրա տեղը, աւելացնում է նոր բանադատը, — Շեքսպիրի, Գեթեի, Բալընի հետ հաւասար մի կարգումն է»:

Հալ ծանօթ է «Գե»-ի հետ Մանուկ Սաղաթեանցի թարգմանութեամբ, որ վերաբերում է 60-ական թւականներին և որը նաև առանձին հրատարակեց 1891 թ.: Հանգուցեալը միայն այդ թարգմանութիւնն է կտակել իւր ազգին, բայց որքան ծանրակշիւ կտակ: Բանաստեղծ հրապարակախօս Սմբատ Շահ Ս. Ղիզեան, ներկելով իր «Յորեկանի Տարեդարձ» ը Մ. Սաղաթեանցի լիշատակին՝ ասում է՝ Ո՛վ իմ սիրելի, քնարիկ լարերը մի անգամ միայն թնդացին և էլէքտրական հոսանքի պէս արագ անցան դոքա և լուցին. վիշաք կուրծքիդ

1) Համեմատեցէք «Գե» սոսկալի մասին ընդարձակ մի գրախօսութիւն պ. Տ. Յովհաննիսեանի տպած «Մուրճ» 1891 միացեալ № 7-8, էջ 925—934:

մէջ, սէրը շրթունքիդ, դու վաղ հե-
ռացար մեզանից. բայց բնութեան
օրէնքով ոչ մի ոչոք, ոչ մի զօրու-
թիւն ձրի չէ անցնում. ահա կենդա-
նի ես դու և քո տաղանդը»։ Մինչև
այժմ ոչ մի թարգմանութիւն հաշ-
կական գրականութեան մէջ, կարե-
լի է ասել, աչնպէս չի հնչել, ինչպէս
«Գե» վիպասանութեան թարգմա-
նութիւնը։ Եթէ չլիշենք մի քանի
գրաբառ ձևեր, մի քանի պակասոր-
դութիւններ տաղաչափութեան վե-
րաբերեալ և երկու-երեք չհասկացած
տողեր, «Գե»-ի թարգմանութիւնը,
համարեա, կատարեալ գրածք է։
Գեղեցիկ ոճ՝ քնքուշ ներդաշնակու-
թեամբ լարած՝ գրաւում է մեզ մի
կախարդական ուժով. մենք նրան
կարդում ենք երկու, երեք, հինգ,
տասն անգամ, — կարդում և չենք
վագնուում. ինչպէս կրակը, որ քան
չատ փչես, աչնքան էլ կը լալնացնէ
իր սահմանները, — աչնպէս էլ՝ որ
քան չաճախ է կարդում ընթերցողն
Մ. Սաղաթեանցի թարգմանած տո-
ղերը, աչնքան ջերմ սիրով կապում է
ալդ տողերի հետ, աչնքան էլ շատ
համակրում է նոցա թարգմանչին և
անկեղծ չարգանք վերաբերում դէ-
պի ալդ թարգմանչի անմոռաց լի-
շատակը։ Մեր ժամանակակից երի-
տասարդ թարգմանիչները, երիտա-
սարդ պոէտները շատ բան կարող են
սովորել «Գե»-ի թարգմանութիւնից՝
և՛ բանաստեղծական ելլէջների ներ-
դաշնակութիւն, և՛ թարգմանական
ճշտութիւն, և՛ ճշմարիտ հաշկական
տաղաչափութիւն... Որքան հարս-
տութիւն էր խոստանում հարազատ
գրականութեանը Մանուկ Սաղա-

թեանցի լուսապալճառ տաղանդը, և
ինչպէս չնտ հանգաւ չալդ տաղան-
դը... Գեղեցիկ օր էր, երկինք ան-
ամպ. բայց հազիւ նաւորը հեռա-
ցաւ ավերից, ինչպէս փչեց դաժան
քամին, նաւը խորտակեց, նաւորը
աւար գնաց ծովի սառն ակիքնե-
րին... Աչնպէս չանկարճակի էր և Մ.
Սաղաթեանցի մահը։ Երբ որ նորա
աչքերը փակեցին չաւիտենական
քնով, հաշ ընթերցող հասարակու-
թիւնը չկարողացաւ գոնէ բնագրո-
ւէն գուշակել, թէ որպիսի զաւակից
է գրկուում... Սակայն՝

„Блаженъ, кто молча былъ поэтъ
И, терномъ славы неувятый,
Презрѣнной чернию забытый,
Безъ имени покинулъ свѣтъ. —
(Պուշկին)։

Հազար երկու հարիւր տողից (մօ-
տաւորապէս), որ պարունակում է
իրա մէջ «Գե»-ի հաւերէն թարգ-
մանութիւնը, 40 տող միմիաչն հըն-
չում են աններդաշնակ, որոնցից 26-ը
կարելի է ուղղել՝ չմեղանչելով թարգ-
մանչի «չորացած գերեզմանի» առաջ։
Եւ մեր կարծիքով ալդ 26 տողի ան-
ներդաշնակութեան պատճառը ոչ
աչնքան թարգմանչի անհմտութիւնն
էր, որքան վիպասանութեան հրա-
տարակողի անտարբերութիւնը։ —
Հաւանական է, որ «ը» տառը հաշ
լեզւի մէջ՝ իբրև երրորդ գէմքի դի-
մորոշ չօղ՝ երկու պէս է գնում՝ «ը»
և «ն»։ Աչն հնչիւնից է կախած եր-
բեմն և հաշ ոտանաւորական տողե-
րի ներդաշնակութիւնը։ Տաղաչափու-
թեան մէջ «ը» փոխելով «ն»՝ բանաս-
տեղծը իմանալ է տալիս իր ընթեր-
ցողին, որ կարդալու ժամանակ՝ ներ-

դաշնակութեան համար՝ պէտք չէ առանձին վանկ նւիրել այդ հնչիւնին¹⁾։ Օրինակ.

«Ո՛հ, մի կանչէք ինձ, որ ձեզ բան
երգեմ,»

Որ ձեր լսելիքն երգով փայտակարձ:

(«Յորեւեանի Տարեդարձ» էջ 20):

«Գե»-ի աննւերդաշնակ տողերից 21 տողի մէջ («ն»-ի փոխարէն «ը» է դրած, ինչ անմարտելի ծանր սպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ: Եթէ ընդգրոււմ անգամ այդպիս է, հրատարակչի սուրբ պարտականութիւնն էր, մեր կարծիքով, ուշադրութիւն դարձնել այդ պակասութիւններին վրայ. թէ այդ պակասութիւններին ուղղելուց տողերը չէին կորցնիլ իրանց ներքին նշանակութիւնը, — այդ պարզ է, և թէ դորանից չէր անպատուիլ Մանուկ Սողաթեանցի վիշատակը, — նոյնպիս պարզ է. դորան ասպցուց են շատ տողեր նոյն իսկ վիպասանութիւնից, որտեղ բանաստեղծը «ը»-ի փոխարէն՝ ներդաշնակութեան համար՝ («ն») է գործածել: Օրինակ.

«Ի՞նչ է մի կուտի ողբն ու արտօսըը
Եղեմաւ կողմի բընակչի համար»:

¹⁾ Սարգիս Սարգսեանը («Մուրճ»-ի սոյն ալս համարում էջ 412) նոյնն է պնդում. ոտանաւորի մէջ, ասում է նա, ինչպէս ամեն մէկը մեղանից զգում է, ը աւելի երկար ձայն ունի քան թէ արձակում, չափաբերակաւ նում նա համարեա մի ամբողջ վանկ կազմելու ընդունակութիւն է ստանում և այդ պատճառով եթէ տողի մէջ հարկ է լինում վանկ պակասացնել՝ ը-ի տեղ դնում են ն:

Ծան. Խմբ.

(«Գե»), արեւելեան վիպասանութիւն՝ էջ 27):

Ողբն և ոչ ողբը, և ուրիշ շատ տողեր:

Ալմմ՝ —

ա) «Գաւար վազում էր, թընչում էր
արագ»...

(ib էջ 37):

տողի մէջ («էր»-ը աւելորդ է և ներդաշնակութիւնը խանդարող կրկնութիւն. կարելի է, անկասկած, չմեղանչելով՝ նրան բաց թողնել:

բ) «Ունալն դարերի շարունակու
թիւնը

Չէր նորա միտքը սարսափեցնում»...

(ib. էջ 5):

«ը» անպէտք պոչ է («շարունակութիւն») բառին. նա մեղանչում է և՛ տաղաչափութեան, և՛ ոտի (չանգի) դէմ:

գ) «Բայց մատաղ փեսան հեռացաւ
այժմ

Իւր նախահայրերի սովորութիւն
նից»...

(ib. էջ 14):

«Իւր» ը աւելորդ է. նա ոչ թէ բացատրական դերանուն է հանդիսանում (առանց նրան էլ՝ ներքին մըտքից՝ հասկանալի է, որ փեսան հեռացաւ իւր նախահայրերի սովորութիւնից և ոչ ուրիշ), — այլ միայն ոտանաւորի ներդաշնակութիւնը խանդարող: — Իսկ հետեւալ ստրոֆայի (տուն)

«Բոլորը մօր հետ՝ քղերով ծածկած՝

Հեռի տեղերից երբէք չեն գալու,
Վշտով, կսկիծով և աղօթքներով
Գերեզմանների վերայ ողբալու»...

(ib. էջ 15):

առաջին տողը պիտի աչսպէս կար-
դալ՝

«Քուրերը մօր հետ՝ ծածկած քօղե-
րով»,—

որովհետև «քօղերով» բառի ոտը
(շանգ) «աղօթքներով» է, բայց
«ծածկած» բառին ոչ առաջիկայ, ոչ
էլ չետագայ ստորճաչում ոտ կալ:

Եթէ այդ մի քանի, ըստ երևու-
թին թեթև, չափաբերութեան դէմ
մեղանչող, պակասութիւնները և մի
քանի սխալները կետադրութեան

վերաբերեալ հեռացւին պոէմաչի
թարգմանութիւնից, աչն ժամանակ
հալը աղատ կարող է ասել, թէ ոչ
մի ազգ չունի թարգմանած «Գև» ը
աչնպէս ճիշտ, աչնպէս գեղեցիկ, ինչ-
պէս իւր գրականութիւնը:

Մեծ արդիւնք կը լինէր եթէ նո-
րից հրատարակէր այդ պոէման:

Յովհաննէս Գրուշի

1894 թ. չունւար, Մոսկա:

BRЭМЪ А. — „Жизнь животных“, въ десяти томахъ, переводъ съ 3-го
нѣмецкаго изданія подъ редакціею магистра зоологіи К. Сентъ-Илера.

Քառածալ, Պետերբուրգ, 1893—1894 թ.

ԲՐԷՄ, Ալֆրէդ.—«Կենդանիների կեանքը»: Թարգմանեց ռուսերէն
գերմանական երրորդ տպագրութիւնից կենդանաբանութեան մա-
գիստրոս Կ. Սէնտ-Իլէր: Տասը հատոր: Գինն է 60 ռուբլի:

Ռուսաց գրականութիւնը վերջին
ժամանակները հարստացաւ մի վե-
րին աստիճանի նշանաւոր գրած-
քով. թարգմանաբար սկսեց դուրս
գալ լատին գերմանացի զիտնական
Ալֆրէդ Բրէմի «Կենդանիների կեան-
քը» հռչակաւոր գրածքը:

Մինչև վերջին ժամանակներս կեն-
դանաբանները ամենկին ուշադրու-
թիւն չէին դարձնում կենդանիների
ներքին, հոգեկան կեանքի վրայ:
Գիտնականներին համարեա բացա-
ռապէս հետաքրքրում էր միմիայն
կենդանիների մարմնի կազմածքը և
զրա զարգացումը: Գրում էին և
հիմա էլ գրում են ահագին հատոր-
ներ մի որ և է որչնի կամ միջատի

մասին, և այդ ահագին հատորները
բաղկացած էին լինում ըստ մեծի
մասին կենդանիների կազմածքի ա-
մեն մի մասի մանրամասն նկարա-
գրութիւններով:

Միևնույն ժամանակ այդ ահագին
հատորների մէջ համարեա ոչ մի էջ
չէր նւիրում նույն կենդանիների սո-
վորութիւններին, նիստ ու կացին...
Այդ ուղղութիւնը այժմ էլ դեռ
նկատում է համալսարաններում,
ուր ընդարձակ կերպով անցնում են
կենդանաբանութիւնը, սակայն շա-
բաթական մի ժամ էլ չի նւիրում
կենդանիների կեանքին:

Այդ ուղղութեան դէմ սկսել են
արդէն զանազան կողմերից բողոք-